ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# 2012-2013

# ՈՒՍՏԱՐՎԱ

# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2013

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին ........ 5
Ուսումնամեթոդական վարչություն ........ 114
Մինչհամալսարանական կրթության վարչություն ........ 119
Հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն ........ 121
Միջազգային համագործակցության վարչություն ........ 126
Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչություն ........ 137
Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչություն ........ 145
Արհեստակցական կազմակերպություն ........ 148
Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարան ........ 152
Պատմության թանգարան ........ 156
Որակի ապահովման կենտրոն ........ 157
Շրջանավարտների և կարիերայի կենտրոն ........ 161
Մշակույթի կենտրոն ........ 164
Գիտակազմակերպական բաժին ........ 169
Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժին ........ 171
Ուսանողական կառույցներ ........ 173
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ ........ 191
Աստվածաբանության ֆակուլտետ ........ 214
Արևելագիտության ֆակուլտետ ........ 222
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ ........ 238
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ ........ 246
Իրավագիտության ֆակուլտետ ........ 257
Կենսաբանության ֆակուլտետ ........ 278
Հայ բանասիրության ֆակուլտետ ........ 340
Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ ........ 363
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ ........ 386
Պատմության ֆակուլտետ ........ 401
Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ ........ 431
Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ ........ 452
Ռուս բանասիրության ֆակուլտետ ........ 494
Սոցիոլոգիայի ֆակուլտետ ........ 507
Տնտեսագիտության ֆակուլտետ ........ 521
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ ........ 539
Քիմիայի ֆակուլտետ ........ 561
Ֆիզիկայի ֆակուլտետ ........ 594
Համահամալսարանական ամբիոններ ........ 645
Իջևանի մասնաճյուղ ........ 650
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ ........ 690
Տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոն ........ 710
Ուժեղ դաշտերի ֆիզիկայի կենտրոն ........ 718
Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն ........ 723
Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն ........ 727
Եգիպտագիտության հայկական կենտրոն ........ 733
Ակադեմիկոս Ալեքսեյ Սիսակյանի անվան հեռանկարային
հետազոտությունների միջազգային կենտրոն ........ 735
Միջազգային կրթական կենտրոն ........ 738
Կիրառական հոգեբանության կենտրոն ........ 742
Կոսմոլոգիայի գիտահետազոտական խումբ-կենտրոն ........ 746
Ռուսական կենտրոն ........ 748
Հրատարակչություն ........ 750
Գիտական հանդեսներ ........ 757
2012-2013 ուստարում ԵՊՀ-ում տեղի ունեցած հիշարժան միջոցառումներն ըստ
www.ysu.am-ի լրահոսի ........ 758

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Գիտական ղեկավար՝** *Սիմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

**Փոխտնօրեն՝** *Հովհաննիսյան Միհր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու*

## *Ինստիտուտի գործունեության հիմնական խնդիրներն ու ուղղությունները*

ՀՀԻ հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են հետևյալ խնդիրներն ու ուղղությունները.

- Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության պատմությունը, պատմագրությունը և մատենագիտությունը (Ցեղասպանագիտության բաժին),
- Հայ-օսմանական առնչությունները (Հայ-օսմանական առնչությունների բաժին),
- Հայ հնագիտությունը (Հնագիտական հետազոտությունների լաբորատորիա),
- Հայաստանի պատմական աշխարհագրության, քարտեզագրության ուսումնասիրությունը (Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիա),
- Հայագիտական պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրությունը (Աղբյուրագիտական լաբորատորիա),
- Վիրտուալ (էլեկտրոնային-համացանցային) հայագիտությունը (Վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժին),
- Հայ-վրացական հարաբերություններ (Վրացագիտության հայկական կենտրոն)
- Հայ-ադրբեջանական հարաբերություններ (Ադրբեջանագիտության հայկական կենտրոն):

## *2012-2013 ուստարում հրատարակվել են*

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս | Քարտեզ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 10 | - | - | 42 | 6 | 6 |

## Ինստիտուտում գործող կենտրոնների, բաժինների և լաբորատորիաների թիվը՝ *8*

# ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Բայրամյան Հրաչիկ Սմբատի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

## *Կենտրոնի աշխատակիցների կազմը*

1. Մաղալյան Վլադիմիր Սարգսի, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Ավետիսյան Լևոն Վազգենի, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Թամարյան Ջեննի Լավրենտիի, կրտսեր գիտաշխատող

## *Կենտրոնի հիմնական խնդիրները*

- ուսումնասիրել Վրաստանի պատմությունը, գրականությունը, լեզուն և մշակույթը,
- ստեղծել համապատասխան ծրագրեր, անհրաժեշտ դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ, զրուցարաններ «Վրացագիտություն» և «Կովկասագիտություն» մասնագիտացումների համար,
- պատրաստել հայ վրացագետների կադրեր,
- անցկացնել գիտական սեմինարներ, կոնֆերանսներ,
- թարգմանել և հրատարակության պատրաստել վրացալեզու հայագիտական արժեքավոր աշխատությունները,
- Հայաստանի և Վրաստանի բուհերի միջև նպաստել գիտակրթական կապերի սերտացմանը:

Գիտական աշխատանքները նվիրված են վրաց գրականության պատմության, հայ-վրացական լեզվական-բառարանագրական առնչությունների, հայ-վրացական գրական-մշակութային կապերի, վրացի և վրացացած հայագետների հայագիտական աշխատությունների ուսումնասիրությանը, դրանցից կարևորագույնների հայերեն թարգմանությանն ու հրատարակության պատրաստելուն:

Վրացագիտության կենտրոնի աշխատանքներն ընթանում են մասնագիտական երկու ուղղությամբ՝ գիտահետազոտական և գիտամանկավարժական (Հայ բանասիրության ֆակուլտետի «Վրացագիտություն» մասնագիտացման և Պատմության ֆակուլտետի բակալավրիական ու «Կովկասագիտություն» մագիստրոսական խմբերում վրացագիտական որոշ առարկաներ դասավանդում են կենտրոնի աշխատակիցներ Բայրամյանը և Թամարյանը):

## *Կենտրոնի գործունեության ուղղությունները*

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնի գիտահետազոտական աշխատանքները հիմնականում նվիրված են եղել վրաց գրականության պատմության և վրաց լեզվի ուսումնական ձեռնարկներ ստեղծելու աշխատանքներին, հայ-վրացական գրական-մշակութային կապերի վերջին տարիների խնդիրներին:

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

***Թեմա 1.*** **Վրաց նորագույն գրականությունը 1900-1960-ական թթ.: (Կատարող՝ Հ. Ս. Բայրամյան):**

Այս աշխատանքը նույն հեղինակի հրատարակած գրքի՝ («Վրաց գրականությունը V-XIX դդ.», Գիրք Ա) շարունակությունն է, քանզի թեման շարունակական է և կարևոր: Այդ նպատակով ձեռնարկել ենք վրաց նորագույն գրականության առաջին շրջափուլի, այն է՝ XX դարի սկզբից մինչև 60-ական թվականների շարադրանքը: Գրքում վրաց դասական գրողներին մենագրական գլուխներ հատկացնելուն զուգահեռ անդրադառնում ենք նաև նույն հեղինակների մասին հայ քննադատական մտքի գնահատականներին. նման մոտեցումը աշխատությունը դարձնում է ավելի բովանդակալից, հետաքրքիր է դառնում նաև վրացի ընթերցողի համար, ինչը բարձր են գնահատել վրացի գրականագետները Ա գրքին նվիրած իրենց գրախոսություններում («Լիտերատուրուլի ձիեբանի», Թբիլիսի, 2010, XXXI, էջ 324-333 (վրաց.) և «The KARTVELOLOGIST», 2011, էջ 203-229 (վրաց. և անգլ.)): Ինչպես Ա, այնպես էլ Բ գիրքն ունի տեսական և կիրառական նշանակություն, այն ևս նախատեսվում է բուհերի հումանիտար ֆակուլտետների համար: Հատորի շարադրանքն ընթացքի մեջ է:

***Թեմա 2.*** **Վրաստանի հայ նորագույն մամուլը և գրատպությունը (1921-1991թթ.): (Կատարող՝ Վ. Ս. Մաղալյան):**

***Թեմա 3.*** **Ժամանակակից հայերենի և ժամանակակից վրացերենի զուգադրական քերականություն. շարահյուսություն: (Կատարող՝ Զ. Լ. Թամարյան Ջեննի):**

Հետազոտությունն ունի տեսական և գործնական նշանակություն ԵՊՀ հումանիտար ֆակուլտետների, Վրաստանի հայկական դպրոցների, հայերենի ու վրացերենի աղերսներն ուսումնասիրողների համար: Աշխատանքը հանձնված է մասնագիտական կարծիքի և խմբագրման:

***Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին:***

Կենտրոնը 2013թ. հիմնադրել է մատենաշար՝ «Հայ-վրացական հարաբերություններ» վերտառությամբ և արդեն լույս է ընծայել առաջին գիրքը, որտեղ ամփոփված են ականավոր գիտնական, լեզվաբան, հայագետ, վրացագետ, կովկասագետ Նիկողայոս Մառի և պատմաբան, տնտեսագետ, պետական, հասարակական գործիչ Քրիստափոր Վերմիշևի դասական արժեք ունեցող աշխատությունները՝ նվիրված հայ-վրացական հարաբերությունների որոշակի հարցերի լուսաբանմանը:

Վրացի բանաստեղծ Ակակի Ծերեթելին իր՝ «Ակակի ժողովածու» («Ակակիիս կրեբուլի») հանդեսում (1899թ., N 5) տպագրում է մի ծավալուն ուսումնասիրություն՝ «Արմենիա, Հայաստան, Սոմխեթի անվանումների պատմական քննություն» վերտառությամբ: Պատասխան հոդվածով հանդես է գալիս ականավոր հայագետ, վրացագետ, կովկասագետ Նիկողայոս Մառը: Մառի հոդվածը, որ լույս էր տեսել «Новое обозрение» լրագրում, նույն տարում (1898) թարգմանվել և հրատարակվել է «Մուրճ» ամսագրում:

Աշխատության մեջ քննության է առնվում Իլիա Ճավճավաձեի «Հայ գիտնականները և քարերի աղաղակը» երկը: Վերմիշևը վերլուծում է գրողի պատմա-տնտեսագիտական հայացքները, պարզաբանում հիմնահարցերը և վեր հանում այն միտումները, որոնք պատճառ են դարձել սուբյեկտիվ եզրահանգումների ու անհարկի մեղադրանքների: Նա առավել քան հետամուտ է եղել Ճավճավաձեի՝ այլազգի գործիչների՝ հայ-վրացական հարաբերությունների մասին գրած աշխատությունների գնահատությանը:

Նյութերը՝ ռուսերեն պատասխան բնագիրը և դրա հայերեն թարգմանությունը, միասին և ամբողջությամբ հրատարակվում են առաջին անգամ:

Գիրքը կարող է օգտակար լինել հայագետներին, վրացագետներին, հայ-վրացական լեզվամշակութային հարցերով հետաքրքրվողներին, մասնավորապես կովկասագետներին և այդ մասնագիտությունն ընտրած ուսանողներին:

Մատենաշարի Ա գիրքը՝ պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռահատոր աշխատությունը, տպագրության ընթացքի մեջ է և լույս կտեսնի եկող ուսումնական տարվա սկզբին:

Նշանավոր պատմաբան, բանասեր, մատենագետ, հնագետ, կովկասագետ Լևոն Մելիքսեթ-Բեկի գիտական ժառանգությունը մեծ արժեք և արդիական նշանակություն ունի հայագիտության համար: Կարևոր նվաճումներից է նրա «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռահատոր աշխատությունը, որոնցում վրացական աղբյուրներից քաղված բնագրերի թարգմանությունն ուղեկցվում է պատմաբանասիրական, աղբյուրագիտական, մատենագիտական ծանոթագրություններով ու բանիմաց մեկնաբանություններով:

Մատենաշարի Ա և Բ գրքերի հրատարակությունը կնպաստի հայագիտության, վրացագիտության ու կովկասագիտության ասպարեզում դեռևս անհրաժեշտ խորությամբ չուսումնասիրված և վիճահարույց բազմաթիվ հարցերի լուսաբանման աշխատանքներին:

Կենտրոնի ղեկավար Հ. Բայրամյանը ժամանակակից վրաց պոեզիայի խնդիրներին նվիրված զեկուցումով հանդես է եկել պոեզիայի միջազգային փառատոնին նվիրված միջոցառմանը:

Կենտրոնի աշխատակիցներ Հ. Բայրամյանը և Ջ. Թամարյանը վրացական պատմվածքներ և նովելներ են թարգմանել ու տպագրել հանրապետության գրական հանդեսներում:

Կենտրոնի աշխատակիցները ուշի-ուշով հետևում են վրացալեզու պարբերական մամուլին, քանզի նրա էջերում հաճախակի են տպագրվում հայ-վրաց պատմամշակութային առնչություններին վերաբերող սուբյեկտիվ, վիճահարույց հոդվածներ: Դրանք թարգմանվում և տրամադրվում են պատկան մարմիններին և հայ մասնագետներին:

Այս ամենից զատ՝ անցկացվում են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված հայ-վրաց գրական-մշակութային կապերին, արժանահիշատակ տարեթվերին, կատարվում են գեղարվեստական երկերի թարգմանություններ, որոնք լույս են տեսնում գրական հանդեսներում և առանձին գրքերով:

## *Հրատարակություններ*

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 2 | - | - | 6 | - |

## *Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ*

### Մենագրություն

1. *Բայրամյան Հ. Ս.,* Հայ-վրացական հարաբերություններ, Մատենաշար, Գիրք Բ (Կազմող, ծանոթագրող և հրատարակության պատրաստող), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 340 էջ:
2. *Մաղալյան Վ. Ս.,* Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885-1990թթ.), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 256 էջ + 16 էջ ներդիր:

**Հոդված**

1. *Բայրամյան Հ. Ս.,* Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկ. Կենսագործունեության համառոտ ակնարկ, Առաջաբան «Հայ-վրացական հարաբերություններ», Մատենաշար, Ա գիրք, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 3-12:
2. *Մաղալյան Վ. Ս.,* Երևանի համալսարանի առաջին հրատարակությունները, ԲԵՀ, սերիա 1. Հայագիտություն, թիվ 138, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 59-67:
3. *Մաղալյան Վ. Ս.,* Աշխարհահռչակ հայագետի երկերի վեցհատորյակի շնորհանդեսը, ԲԵՀ, սերիա 1. Հայագիտություն, թիվ 139, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 74-80:
4. *Մաղալյան Վ. Ս.,* Նոր էջեր կովկասյան մամուլի անցյալի պատմությունից /XIX դարի առաջին կես/, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, պրակ Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 232-242:
5. *Մաղալյան Վ. Ս.,* Տերյանագիտության երախտավորը (Սաքո Սուքիասյան), «Էջմիածին» հանդես, թիվ Բ, «Էջմիածին» հրատ., Էջմիածին, 2013, էջ 110-118:
6. *Թամարյան Զ. Լ.,* «Հայոց դանթեականի» գեղարվեստական համակարգը, «Գարուն», թիվ 5-6, «Բեկոր» հրատ., Երևան, 2013, էջ 54-59:

## ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

**Բաժնի ղեկավար՝** *Հովհաննիսյան Միհր Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու*

### *Բաժնի աշխատակիցների կազմը*

1. Հակոբյան Լիլիթ Վարդանի, կրտսեր գիտաշխատող
2. Մուրադյան Լիլիթ Վարդանի, կրտսեր գիտաշխատող
3. Աղաջանյան Թագուհի Կամոյի, ավագ լաբորանտ
4. Ջոհրաբյան Ելենա Վրույրի, ավագ լաբորանտ
5. Պողոսյան Սիմոն Սերգեյի, ավագ լաբորանտ
6. Սեդրակյան Նինա Հաբեթի, ավագ լաբորանտ
7. Ավանեսյան Մելինե Կարենի, լաբորանտ

### *Բաժնի հիմնական խնդիրները*

21-րդ դարում հայագիտական ուսումնասիրությունների աղբյուրագիտական և տեղեկատվական շտեմարանների դերը հետզհետե ստանձնում է համացանցը: Այս դաշտում առաջադրված խնդիրները հայագիտության համար արդի մարտահրավերներ են: Բաժնի առջև ծառացած խնդիրներից են համացանցում հայագիտության ներկայացվածության հիմնախնդիրների դիտարկումը, անհրաժեշտ հայագիտական գրականության թվայնացումը, համապատասխան կայքերի պատրաստումն ու համացանցում անհրաժեշտ նյութերի տարածման ապահովումը:

### *Բաժնի գործունեության ուղղությունները*

Բաժինն իրականացնում է համացանցում զետեղված հայագիտական, հակահայագիտական նյութերի վերհանումը, մոնիթորինգը, համակարգումը, հասցեագրումը համապատասխան

մասնագետներին, հայագիտական անհրաժեշտ գրականության թվայնացումը, կայքերի և այլ համացանցային պաշարների պատրաստումը և սպասարկումը, ինչպես նաև ՀՀԻ-ի հետ ԶԼՄ-ների ու հասարակայնության կապերի ապահովումը:

## Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Հաշվետու ուստարում բաժինը թվայնացրել և տեղադրել է 200 հայագիտական ուսումնասիրություն, 600 հանրագիտարանային գիտահանրամատչելի հոդվածներ, 80 գիտական հոդվածներ, շուրջ 150 քարտեզներ, 70 արխիվային փաստաթղթեր, պատմական տարաբնույթ լուսանկարներ և տեսանյութեր: Ընդհանուր առմամբ ՀՀԻ պաշտոնական՝ www.armin.am և 7 թեմատիկ՝ www.armenianarchaeology.am, www.armeniaculture.am, www.armeniandiaspora.am, www.historyofarmenia.am, www.armenianlanguage.am, www.armeniansgenocide.am, www.armenianreligion.am կայքերում առկա են 430 գրքեր, 1000 հանրագիտարանային գիտահանրամատչելի հոդվածներ, 168 գիտական հոդվածներ, շուրջ 340 քարտեզներ, 110 արխիվային փաստաթղթեր:

2013թ. ապրիլի 18-ին ԵՊՀ գիտխորհրդի նիստերի դահլիճում բաժինը կազմակերպել է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի թեմատիկ հիշյալ 7 կայքերի շնորհանդեսը:

2013թ. սեպտեմբերից մեկնարկող ՀՀԻ «Ցեղասպանագիտություն» մագիստրոսական ծրագրի շրջանակում բաժնի կողմից նախագծվել և ներկայումս շահագործվում է masters.armeniansgenocide.am ենթադոմենային կայքը:

Բաժնի ղեկավար Միհր Հովհաննիսյանը 2012թ. հոկտեմբերի 4-6-ը մասնակցել է ՀՀ սփյուռքի նախարարության հովանու ներքո կազմակերպված «Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ» խորագրով լրագրողների համահայկական 6-րդ համաժողովին՝ հանդես գալով «Հայոց ցեղասպանության ներկայացման խնդիրները համացանցում 2012թ.» զեկույցով, իսկ 2013թ. մայիսի 15-17-ը՝ Բեյրութի Հայկազյան համալսարանում անցկացված «Հայկական անդրսահմանային տարածականությունը և արդի հաղորդակցական միջոցները» թեմայով գիտաժողովին՝ «Հայագիտության ներկայացվածության հիմնախնդիրները համացանցում» զեկույցով:

## Հրատարակություններ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | 1 | 1 |

## Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

### Հոդված

1. *Հովհաննիսյան Մ. Ս.,* Համացանցի հայագիտական ռեսուրսները Հայաստան-Սփյուռք գիտակրթական գործակցության համատեքստում, «Սփյուռքագիտություն (տեսության և պատմության հարցեր)» տարեգիրք, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 142-151:

**Զեկուցումների թեզիս**

1. *Յովհաննիսեան Մ. Ս.,* Հայագիտութեան ներկայացուածութեան հիմնախնդիրները համացանցում, «Հայկական անդրսահմանային տարածականութիւնը եւ արդի հաղորդակցական միջոցները» գիտաժողով, Բեյրութ, մայիսի 15-17, 2013:

## ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի վարիչ՝ *Մխիթարյան Վարդան Գառնիկի*

### *Լաբորատորիայի աշխատակիցների կազմը*

1. Հարությունյան Ռուզաննա Վասպուրականի, պատմ. գիտ. թեկնածու, գիտաշխատող
2. Բաղալյան Գեղամ Միհրանի, կրտսեր գիտաշխատող
3. Ղամբարյան Գոհար Գուրգենի, կրտսեր գիտաշխատող
4. Արզումանյան Սրբուհի Անդրանիկի, ավագ լաբորանտ

### *Լաբորատորիայի հիմնական խնդիրները*

1. Ուսումնասիրել պատմական զարգացման տարբեր փուլերում Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը՝ Հայաստանի պատմական աշխարհագրությունը, որը ներառում է հետևյալ ուղղությունները. պատմական ֆիզիկական աշխարհագրություն, պատմական քաղաքական աշխարհագրություն, բնակչության և տարաբնակեցման պատմական աշխարհագրություն, պատմական տնտեսական աշխարհագրություն, պատմամշակութային աշխարհագրություն և պատմաաշխարհագրական երկրագրություն:

Վերոհիշյալից ակնառու է դառնում, որ լաբորատորիայի ուսումնասիրությունների շրջանակներում կարող են ներառվել նաև ներկա ժամանակաշրջանի աշխարհագրական հետազոտությունները:

2. Կատարել պատմական զարգացման տարբեր փուլերում Հայաստանի պատմաաշխարհագրական ուսումնասիրությունների տարածական տեղաբաշխման պատկերում և մոդելավորում՝ քարտեզների ստեղծում: Ավելի լայն մեկնաբանությամբ դա քարտեզների հեղինակային և կազմողական բնօրինակների, ձևավորման և տպագրական բնօրինակների ստեղծման աշխատանքն է:

3. Կիրառել պատմաաշխարհագրական ուսումնասիրություններում ժամանակակից տեղեկատվական համակարգերի և տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ պատմական գեոինֆորմատիկա, որը նոր մոտեցում է պատմական հետազոտություններում : Այն հնարավորություն կընձեռի ժամանակակից և հին քարտեզների, ինչպես նաև տեղեկատվական բազաների համադրմամբ կատարել վերլուծություններ, ստանալ որակապես նոր քարտեզներ:

### *Լաբորատորիայի գործունեության ուղղությունները*

- Պատմական աշխարհագրություն
- Աշխարհագրություն

- Պատմական քարտեզագրություն
- Քարտեզագրություն
- Պատմական գեոինֆորմատիկա
- Ատլասների կազմում և ձևավորում (Ցեղասպանության ատլասի ստեղծում)
- Ուսումնամեթոդական քարտեզների և պաստառների (պլակատների) կազմում և ձևավորում
- Ադրբեջանական և թուրքական քարոզչության դեմ պայքարի ծավալում

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

***Թեմա 1.*** «Ցեղասպանության ատլաս»-ի ստեղծում (անգլերենով):

Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիան սույն թվականի սկզբից ձեռնամուխ է եղել անգլերեն լեզվով «Ցեղասպանության ատլաս»-ի կազմողական և ձևավորման աշխատանքների իրականացմանը: Անգլերեն լեզվով «Ցեղասպանության ատլաս»-ի պատրաստումն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական մեծ նշանակություն:

Ատլասն ունենալու է հետևյալ կառուցվածքը. բաղկացած է լինելու տիտղոսաթերթից, բովանդակությունից, ներածությունից, պայմանական նշանների էջից, պատմական քարտեզների շարքից, բացատրական տեքստերից և նկարներից, տվյալ ժամանակահատվածին առնչվող պատմական (հին) քարտեզների կամ փաստաթղթերի պատճեններից, անվանացանկից:

Լաբորատորիայի բոլոր աշխատակիցները ներգրավված են ատլասի պատրաստման աշխատանքներում: Աշխատանքների կատարման ներկա փուլում լաբորատորիան զբաղված է նոր կազմվող քարտեզների և դրանց համար քարտեզագրական հիմքերի պատրաստմամբ, եղած նյութերից աշխարհագրական տեղանունների դուրսգրմամբ, դասակարգմամբ և թարգմանության համար ցանկերի նախապատրաստմամբ:

***Լաբորատորիայում կատարված այլ աշխատանքների մասին:***

Լաբորատորիան գիտական թեմայի իրականացումից զատ՝ կատարում է նաև այլ գիտական աշխատանքներ:

Վ. Մխիթարյանը պատրաստում է «Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզագրությունը» վերտառությամբ ատենախոսություն: Այս աշխատանքի իրականացման շրջանակում Վ. Մխիթարյանն ուսումնասիրել և օգտվել է ՀՀ Ազգային գրադարանի քարտեզագրության բաժնից, Ազգային արխիվից, Մատենադարանից, Աշխարհագրական ընկերության տրամադրության ներքո գտնվող նյութերից, ԳԱԱ գրադարանից, ԵՊՀ գրադարանից, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի և Ազգային գրադարանի քարտեզագրության բաժիններից (Ստ. Պետերբուրգ), Ֆրանսիայի Ազգային գրադարանի քարտեզագրության «Քարտեզ և հատակագիծ» բաժնից, Աշխարհագրական ընկերության, Արտաքին գործերի նախարարության, Աշխարհագրության ազգային ինստիտուտի, Նուբարյան գրադարանի քարտեզագրական հավաքածուներից, ինչպես նաև մասնավոր հավաքածուներում (Կլոդ (Արմեն) Մութաֆյանի) և համացանցում տեղ գտած քարտեզագրական նյութերից: Այս աշխատանքների արդյունքում կազմվել է պատմական բացառիկ աղբյուրների՝ «Ֆրանսիական պատմական քարտեզների» հավաքածուն (ավելի քան 150 անուն քարտեզ): Նախատեսում ենք պատմական քարտեզների այս հավաքածուն առանձին գրքով հրատարակել: Պատմական քարտեզների այս հավաքածուի կազմումը և հրատարակումը մեզ համար ունեն գիտական ու քաղաքական մեծ նշանակություն:

Ռ. Հարությունյանը զբաղվում է Մեծ Հայքի Այրարատ աշխարհի և Մարզպանական Հայաստանի պատմաաշխարհագրական ուսումնասիրությամբ (այս թեմայով հրատարակվել են մի շարք գիտական հոդվածներ), և նախատեսվում է նշված թեմայի շրջանակում կազմել պատմական քարտեզների մի շարք:

Գ. Ղամբարյանը պատրաստում է ««Աճի բևեռներ և կենտրոններ» հայեցակարգը ՀՀ ռեգիոնալ զարգացման գործընթացում» վերտառությամբ աշխարհագրական ատենախոսություն:

## Հրատարակություններ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Քարտեզ |
|---|---|---|---|---|---|
| - | 1 | - | - | - | 6 |

## Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

### Մենագրություն

1. *Հարությունյան Բ. Հ.* (Հեղինակ), *Մխիթարյան Վ. Գ.* (Ատլասի քարտեզների կազմողական և ձևավորման աշխատանքներ), Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» հրատ., Երևան, 2012, 104 էջ:

### Քարտեզ

1. *Մխիթարյան Վ. Գ.* (Հեղինակ), 1. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատմա-մշակութային հուշարձանները, Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» հրատ., Երևան, 2012, էջ 82-83:
2. *Մխիթարյան Վ. Գ.* (Համահեղինակ), Հայկական ԽՍՀ արդյունաբերությունը Յոթնամյակի տարիներին (1959-1965 թթ.), Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» հրատ., Երևան, 2012, էջ 72-73:
3. *Մխիթարյան Վ. Գ.* (Համահեղինակ), Հայկական ԽՍՀ և ԼՂԻՄ-ի արդյունաբերությունը 1965-1985 թթ., Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» հրատ., Երևան, 2012, էջ 74-75:
4. *Մխիթարյան Վ. Գ.* (Համահեղինակ), Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադը և Որոտան-Արփա-Սևան ջրատարը, Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» հրատ., Երևան, 2012, էջ 70:
5. *Մխիթարյան Վ. Գ.* (Համահեղինակ), Հայաստանի ՍԽՀ (1936-ից Հայկական ԽՍՀ) և ԼՂԻՄ-ի ինդուստրացումը առաջին ձեռնարկների և I (1928-1932), II (1933-1937) ու III (1938-VI 1941) հնգամյակների շրջանում, Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» հրատ., Երևան, 2012, էջ 60-61:
6. *Մխիթարյան Վ. Գ.* (Համահեղինակ), Հայաստանի ՍԽՀ (1936-ից Հայկական ԽՍՀ) և ԼՂԻՄ-ի կոլեկտիվացումը (1929/30-1937 թթ.), Հայաստանի պատմության ատլաս, Գ մաս, «Մանմար» հրատ., Երևան, 2012, էջ 62-63:

### Զեկուցում

1. *Mkhitaryan V.,* Les cartes françaises de la Transcaucasie comme sources historique, L'Europe et le Caucase, Les relations interrégionales et la question de l'identité, Université Paul Valéry-Montpellier III, Les 27 et 28 septembre 2012.

## ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

**Բաժնի վարիչ՝** *Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր*

### *Բաժնի աշխատակիցների կազմը*

1. Հայրունի Աշոտ Նորայրի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող
2. Պողոսյան Վարուժան Արամազդի, պատմ. գիտ. դոկտոր, առաջատար գիտաշխատող
3. Գևորգյան Սուսաննա Պարույրի, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Մելքոնյան Գևորգ Գագիկի, պատմ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
5. Գալստյան Գայանե Հայկազի, կրտսեր գիտաշխատող
6. Մակարյան Էվելինա Անդրանիկի, կրտսեր գիտաշխատող
7. Աղուզումցյան Աննա Խաչատուրի, ավագ լաբորանտ
8. Վրացյան Մարգարիտ Ալբերտի, ավագ լաբորանտ
9. Դերձյան Վահանդուխտ Վահանի, լաբորանտ

### *Բաժնի հիմնական խնդիրները*

- Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրություն
- Հայոց ցեղասպանության արտասահմանյան պատմագրության ուսումնասիրություն
- Փաստաթղթերի ժողովածուների կազմում
- Օտար ականատեսների վկայությունների և արտասահմանյան պատմաբանների արժեքավոր ուսումնասիրությունների թարգմանություններ

### *Բաժնի գործունեության ուղղությունները*

- 19-րդ դարի վերջի - XX դարի սկզբի հայկական ազատագրական շարժումներ,
- 1909թ. կիլիկյան կոտորածներ
- 1915թ. Մեծ եղեռն
- Եվրոպական մեծ տերությունների քաղաքականություն
- Հայոց ցեղասպանության առաջին փուլի՝ 1890-ական թվականների կոտորածների պատմագրության ուսումնասիրություն՝ ցեղասպանագիտության նվաճումների կտրվածքով

### *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

Հաշվետու ժամանակաընթացքում աշխատակիցները տպագրել են երկու մենագրություն, վերահրատարակել մեկ ֆրանսիական սկզբնաղբյուր:

Վ. Պողոսյանի թարգմանությամբ լույս է տեսել Մարի-Աննա Շևալյեի գիրքը՝ նվիրված միջնադարյան Կիլիկիայի պատմությանը՝ «Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից», Երևան, 2013, 116 էջ:

## Հրատարակություններ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | 4 | - | - | 10 | - |

## Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

### Մենագրություն

1. *Սիմոնյան Հ. Ռ.,* Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք 5-րդ, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 1295 էջ:
2. *Հայրունի Ա. Ն.,* Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 192 էջ:
3. *Հիլզենրաթ Է.,* Վերջին մտքի հեքիաթը, էսպերանտո լեզվով, թարգմ.՝ Գևորգյան Ս. Պ., ԵՊՀ հրատ, Երևան, 2013, 180 էջ:
4. *Capitaine H. S.,* Turcs et Turquie, La réédition est préparée par Varoujean Poghosyan, Erevan, Éditions de l'Universié d'État d'Erevan, 2013, 212 p.

### Հոդված

1. *Պողոսյան Վ. Ա.,* Հայոց ցեղասպանության Ռենե Պինոնի հայեցակարգը, «Էջմիածին», թիվ Դ, 2013, էջ 87-96:
2. *Погосян В. А., реценз.* С. Ф. Блуменау, Революционные преобразования Учредительного собрания во Франции в 1789-1791 годах, Брянск, Annales historiques de la Révolution française, N 4, octobre-décembre, 2012, p. 246-249.
3. *Погосян В. А., реценз.* Россия - Франция: 300 лет особых отношений, Отв. ред. Ю.И. Рубинский, М.Ц. Арзаканян, Annales historiques de la Révolution française, N 4, octobre-décembre, M., 2012, p. 271-274.
4. *Poghosyan V. A., edited* Karabagh movement. Bibliography. Compiled by Alik Gharibyan and Varoujean Poghosyan, Yerevan, 2013, p. 50.
5. *Գևորգյան Ս. Պ., (համահեղինակ՝ Գևորգյան Կ. (Ե.) Հ.)* Հնաբանութիւնները Գարեգին Նժդեհի երկերում, «Էջմիածին» հանդես, Բ, Էջմիածին, 2013, էջ 55-68:
6. *Հայրունի Ա. Ն.,* Առաքելական, բայց ոչ դավանափոխիչ կազմակերպությունը, Գիտական հոդվածների ժողովածու, «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 245-254:
7. *Հայրունի Ա. Ն.,* Դր. Յոհաննես Լեփսիուսի «Գերմանական առաքելություն Արևելքում» ընկերության հայանվեր գործունեությունը Պարսկաստանում, Ա մաս, «Հայկական հարց» (Աբովյանագիտական հայագիտական հասարակական-քաղաքական հանդես), N 1 (2), Երևան, 2013, էջ 21-31:
8. Hayruni, Johannes Lepsius während des Weltkrieges, Teil 1., in: "Armenisch-Deutsche Korrespondenz", Frankfurt/M., Jg. 2013, Heft 1, S. 43-45.
9. Hayruni, Karen Jeppe und die Rettung der verschleppten Armenier, Teil 2, in: "Armenisch-Deutsche Korrespondenz", Frankfurt/M., Jg. 2012, Heft 2, S. 47-50.
10. Hayruni, Karen Jeppe und die Rettung der verschleppten Armenier, Teil 3, in: "Armenisch-Deutsche Korrespondenz", Frankfurt/M., Jg. 2012, Heft 3, S. 45-48.

# ՀԱՅ-ՕՍՄԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

**Բաժնի վարիչ՝** *Սահակյան Լուսինե Սուրենի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

## *Բաժնի աշխատակիցների կազմը*

1. Սաֆարյան Ալեքսանդր Վիլենի, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր, ավագ գիտաշխատող
2. Կոնտակչյան Կատարինա Աստուրի, կրտսեր գիտաշխատող
3. Սարգսյան Անի Համլետի, ավագ լաբորանտ
4. Մինասյան Միհրան Անթունի, լաբորանտ

## *Բաժնի հիմնական խնդիրները*

Հայ-օսմանական առնչությունների բաժնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Օսմանյան կայսրության իրականացրած վարչական, հարկային, ժողովրդագրական, կրոնական և լեզվական քաղաքականությունը, քննել հայերի և այլ քրիստոնյա ժողովուրդների իսլամացման փուլերն ու նպատակները, տեղանունների թուրքացման մեթոդները (մասնավորապես Արևմտյան Հայաստանում և հարակից հայաբնակ շրջաններում): Կենտրոնի նպատակներից է նաև դաշտային աշխատանքների միջոցով ուսումնասիրել Թուրքիայի Ռիզե նահանգի կազմում գտնվող պատմական հայոց Համշեն գավառի տեղանուններն ու ժողովրդագրությունը, բռնի իսլամացված համշենցիների ներկայիս սերունդների խոսակցական թուրքերենում պահպանված հայերեն բառերը, ինչպես նաև ինքնության խնդիրները: Կենտրոնի խնդիրներից են նաև այս հարցերի վերաբերյալ թուրքական պատմագրության կեղծարարության բացահայտումն ու հակադարձումը:

Կենտրոնում ուսումնասիրվել են թյուրքականության գաղափարախոս Զիա Գյոքալփի քաղաքական, մշակութային և տնտեսագիտական հայացքները: Համակողմանի պատմաբանասիրական, աղբյուրագիտական քննության են ենթարկվել Զիա Գյոքալփի «Թյուրքականության հիմունքները», «Թյուրքական քաղաքակրթության պատմություն» հիմնարար աշխատությունները, օսմանական տարբեր հանդեսներում հրատարակված սոցիոլոգիական, մանկավարժական, լեզվաբանական բնույթի հոդվածները, բանաստեղծությունները:

Լեզվաբանական քննության են ենթարկվում նաև Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում պահվող հայատառ-ղփչաղերեն ձեռագրերը: Առաջին անգամ նկարագրվել է 1634թ. գրիչ Ավետիքի (N 3522) ձեռագրում տեղ գտած «Քերականություն ղփչաղաց» հայատառ ղփչաղերեն հատվածը (էջ 226-353), որի մասին համապատասխան զեկուցումներ են ներկայացվել ԵՊՀ-ում հայ-ղազախական և Աստանայի Լ. Ն. Գումիլյովի անվան ազգային համալսարանում կայացած միջազգային թյուրագիտական գիտաժողովներում:

## *Բաժնի գործունեության ուղղությունները*

1. Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում տեղանունների թուրքացման քաղաքականության ուսումնասիրություն
2. Զիա Գյոքալփի քաղաքական, մշակութաբանական հայացքների քննություն
3. Դաշտային աշխատանքների հիման վրա Համշենի միկրոտեղանունների իմաստակառուցվածքային քննություն

4. Հայատառ-ղփչաղերեն ձեռագրի լեզվական քննություն
5. Օսմանյան կայսրության հարկային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում
6. Օսմանյան աշխարհագիր մատյանների, տարեգրքերի և հայկական ու օտար աղբյուրների համադրությամբ հայկական նահանգների ժողովրդագրական շարժերի ուսումնասիրություն
7. Թուրք պատմագրության կեղծարարության բացահայտում և հակադարձում
8. Հայ ուսանողների համար օսմաներեն դասագրքի ստեղծում

## *Ըստ ընդհանուր ուղղությունների՝ բաժնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում*

***Թեմա 1.*** Լ. Ս. Սահակյանը 2010, 2011 և 2012թթ. ամռանը ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի աջակցությամբ դաշտային աշխատանքներ է կատարել Թուրքիայի Ռիզեի և Արդվինի, Էրզրումի նահանգների համշենաբնակ շրջաններում՝ հատկապես պատմական հայոց Համշեն գավառում (Չայելի, Չամլըհեմշին, Համշեն և Արտաշեն գավառներում), ուր գրանցվել են համշենցիների ներկայիս սերունդների խոսակցական թուրքերենում պահպանված բազմաթիվ հայերեն միկրոտեղանուններ, կենցաղային բառեր, բանահյուսական նյութեր: Ուսումնասիրման արդյունքների մի մասը Լ. Սահակյանը հրատարակել է «Համշենի մանրատեղանունները» մենագրության տեսքով (հայերեն, թուրքերեն, ռուսերեն լեզուներով):

Կատարված գիտահետազոտական աշխատանքների հիման վրա Լ. Սահակյանը 2012թ. պատրաստել է գիտահանրամատչելի «Համշենն անցյալի ու ներկայի խաչմերուկներում» վավերագրական ֆիլմը, որը ներկայացնում է 18-րդ դարում Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացված («թուրքացված») համշենահայության սերունդների ներկա վիճակը: Այսօր նրանք հիմնականում ապրում են Թուրքիայի Ռիզեի և Արդվինի նահանգներում, ինչպես նաև Ստամբուլում և այլ քաղաքներում: Ֆիլմում ներկայացված են բացառիկ դրվագներ Համշենի հայկական երբեմնի հզոր իշխանության, մշակույթի պատմությունից, բռնի իսլամացման օսմանյան քաղաքականությունից, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղասպանության մի տարատեսակ: Ռիզեի և Արդվինի նահանգներում կատարած նկարահանումների հիման վրա ներկայացվում են համշենցիների այսօրվա մշակույթը, երգարվեստն ու պարը, սովորույթները, լեզվական վիճակը, նաև կենցաղն ու զբաղմունքը, ինքնության հետ կապված նրանց ընկալումներն ու ժողովրդագրական պատկերը: 2012թ. դեկտեմբերի 2-ին Հոլիվուդում կազմակերպված «ԱՐՓԱ» միջազգային կինոփառատոնում Լուսինե Սահակյանի հեղինակած ֆիլմն արժանացել է Արմին Թ. Վեգների անվան պատվավոր մրցանակին՝ «Ճշմարտությունը տեսնելու և այն ասելու քաջության համար»: Այս մրցանակն առաջին անգամ է տրվում Հայաստանի ներկայացուցչին: 2013թ. ֆիլմը ցուցադրվել է նաև «Ոսկե ծիրան» միջազգային ֆիլմերի փառատոնին:

***Թեմա 2.*** Հրատարակվել է Լ. Սահակյանի «Համշենի մանրատեղանունները» մենագրությունը (հայերեն, անգլերեն, ռուսերեն), Երևան, ԵՊՀ հրատ., 2012: Հրատարակության է պատրաստ նույն գրքի ֆրանսերեն տարբերակը:

***Թեմա 3.*** Կենտրոնի աշխատակիցներ Ալ. Սաֆարյանը և Լ. Սահակյանը, ինստիտուտի տնօրեն Ա. Սիմոնյանի ղեկավարությամբ, քննության են ենթարկել 1634թ. գրիչ Ավետիքի (N 3522) ձեռագրում տեղ գտած «Քերականություն ղփչաղաց» հայատառ ղփչաղերեն հատվածը՝ վեր հանելով այդ նյութի պատմալեզվական արժեքը:

***Թեմա 4.*** Կենտրոնի աշխատակիցները դասախոսություններով և զեկուցումներով հանդես են եկել միջազգային գիտաժողովներում:

***Թեմա 5.*** Կենտրոնի աշխատակից Անի Սարգսյանը «Իսլամական ձեռագրերի ասոցիացիայի» (The Islamic Manuscript Association) և Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ մատենադարանի հետ համատեղ իսլամական ձեռագրագիտության դասընթացի շրջանակում անցել է վերապատրաստում /http://www.islamicmanuscript.org/training/2013CodicologyShortCourseArmenia.html/:

## Հրատարակություններ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | 4 | 1 |

## Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

### Հոդված

1. *Սահակյան Լ. Ս.,* Համշենի Եղնովիտ-Էլեվիթ բնակավայրի պատմությունը և տեղանվան ստուգաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», հ. 2-3, 2012, էջ 305-315:
2. *Սահակյան Լ. Ս., Սաֆարյան Ա. Վ., Մելիքյան Գ. Վ.,* XVII դարի գրիչ Ավետիքի՝ Մատենադարանի № 3522 ձեռագրի պատմաբանասիրական արժեքը, «Իրան-Նամէ» արևելագիտական հանդես, հատոր 44-45, 2012-2013, էջ 48-51:
3. *Սաֆարյան Ալ. Վ., Մելիքյան Գ. Վ.,* Ակադեմիկոս Վլադիմիր Գորդլևսկին հայագիտական հիմնահարցերի մասին, «Արևելագիտության հարցեր», VII, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 148-165:
4. *Սարգսյան Ա. Հ.,* Բաքիի դիվանի թեմատիկ առանձնահատկությունների շուրջ, «Orientalia», Պրակ 14, Իրանագիտական կովկասյան կենտրոն, Երևան, 2013, էջ 38-45:

### Զեկուցումների թեզիս

1. *Саргсян А. Г.,* Некоторые особенности рукописей Махмута Бакы, Рукописи 1-ый источник изучения национального наследия, Материалы (международной научной конференции), Aşgabat, Ylym, 2013, стр. 417-418 (նույնը անգլերեն՝ էջ 244-245, նույնը թուրքմեներեն՝ էջ 74):

# ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Սիմոնյան Արամ Հրաչիկի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

## Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Ղարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, ավագ գիտաշխատող
2. Զամալյան Դավիթ Վրույրի, հոգ. գիտ. թեկնածու, կրտսեր գիտաշխատող
3. Աղաբաբյան Ալվինա Սամվելի, կրտսեր գիտաշխատող
4. Ասատրյան Արմինե Ալբերտի, կրտսեր գիտաշխատող

5. Միրաքյան Վահրամ Գնորգի, կրտսեր գիտաշխատող
6. Սաֆարյան Սուսաննա Գարիկի, կրտսեր գիտաշխատող
7. Սիմոնյան Անի Արամի, կրտսեր գիտաշխատող
8. Ամիրխանյան Սոնա Վահանի, ավագ լաբորանտ
9. Բաբայան Հասմիկ Մամիկոնի, լաբորանտ
10. Ղազարյան Ծովինար Սարգսի, լաբորանտ
11. Մարդոյան Լուսինե Աշոտի, լաբորանտ

## Լաբորատորիայի հիմնական խնդիրները

- Հայագիտության վերաբերյալ արխիվային վավերագրերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և արտասահմանյան այլ երկրներում գտնվող արխիվներից
- Հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին վերաբերող ձեռագրերի հետազոտում և հայագիտական տարբեր օջախներում պահպանվող մատյանների մասին տեղեկությունների ուսումնասիրում և համակարգում
- Հայոց պատմության առանձին էջերին առնչվող արժեքավոր արխիվային փաստաթղթերի բացահայտում և ժողովածուների տեսքով հրատարակության նախապատրաստում

## Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

- Արդեն մի քանի տարի է՝ լաբորատորիայի աշխատակիցներն աշխատում են Հայաստանի և հայերի վերաբերյալ Ռուսական կայսրության տարածքում տեղեկությունների հավաքագրմամբ:
- Հետազոտական աշխատանքներ են տարվում Հայոց ցեղասպանության վավերագրերի, հուշագրությունների, տարբեր վկայությունների հավաքման, մշակման և հրատարակման ուղղություններով:
- Հայոց հայրենիքի առանձին երկրամասերի (Զանգեզուր, Լեռնային Ղարաբաղ, Ջավախք, Նախիջևան) տարբեր ժամանակահատվածների պատմության առանցքային իրադարձություններին առնչվող փաստաթղթերի հավաքագրում, ուսումնասիրություն ու հրատարակում:
- Հայոց ցեղասպանության և հայկական պահանջատիրության իրավական խնդիրների ուսումնասիրություն:
- Արցախի պատմության հնագույն շրջանի ուսումնասիրություն, Արցախյան հիմնախնդրի նորովի արժևորում, շարժման, ազատագրական պատերազմի և ԼՂՀ կայացման պատմության ներկայացում:

## Հրատարակություններ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| 1 | 3 | - | - | - | 1 |

## *Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ*

### Դասագիրք

1. *Սիմոնյան Ա. Հ.,* Հայոց պատմություն (բուհական դասագիրք), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 874 էջ:

### Մենագրություն

1. *Ղարիբյան Ա. Ա.,* Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թթ. և Մեծ Բրիտանիան, ISBN 978-5-8084-1671-0, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 282 էջ:
2. *Սիմոնյան Ա. Հ.,* Նիկողայոս Ադոնց, Երկեր (Ե), (Խմբագրական աշխատանք), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 664 էջ:
3. *Սիմոնյան Ա. Հ.,* Նիկողայոս Ադոնց, Երկեր (Զ), (Խմբագրական աշխատանք), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 540 էջ:

### Զեկուցումների թեզիս

1. *Simonyan A. H.,* Armenian medievial sources the history of Turkmen states of Ak-goyunly and Kara-goyunly, Manuscripts are the first source for studying the national heritage, Abstracts of reports of the international Scienific Conference, March 13-14, Ashgabat, 2013, p. 178-179.

## ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի վարիչ՝ *Ավետիսյան Հայկ Գրիգորի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող*

## *Լաբորատորիայի աշխատակիցների կազմը*

1. Բոբոխյան Արսեն Ալեքսանի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
2. Գնունի Արտակ Վարդգեսի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
3. Կիրակոսյան Լյուբա Վլադիմիրի, ճարտ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
4. Վարթանեսովա Տատյանա Վլադիմիրի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Տեր-Մարտիրոսով Ֆելիքս Իվանի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Օհանյան Հովհաննես Արտաշի, պատմ. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
7. Աբաջյան Լիլիթ Վլադիմիրի, կրտսեր գիտաշխատող
8. Գասպարյան Բորիս Զարեհի, կրտսեր գիտաշխատող
9. Դավթյան Անժելա Զալիոսի, կրտսեր գիտաշխատող
10. Սարգսյան Հասմիկ Ալբերտի, կրտսեր գիտաշխատող
11. Ավետիսյան Նատալիա Հայկի, լաբորանտ

## Լաբորատորիայի հիմնական խնդիրները

Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրություն, որը ներառում է դաշտային աշխատանքները, նյութի լաբորատոր մշակումը, չափագրումը և հրապարակումը: Բացի դրանից՝ լաբորատորիայի աշխատակիցների կողմից ուսումնասիրվում է և վերակազմվում հնագույն լանդշաֆտը, ինչը հիմքեր է ստեղծում հնեաաշխարհագրական մոդելի վերակազմության համար: Վերակազմության առարկա են հանդիսանում նաև հնագույն ճանապարհները:

## Լաբորատորիայի գործունեության ուղղությունները

- Պեղումներ են կատարվել Արամուսի ուրարտական ամրոցի տարածքում:
- Ուսումնասիրություններ են կատարվել Կոտայքի մարզի մի շարք հանգուցային հուշարձաններում՝ Կամարիսում և այլն:
- Պեղումներ են իրականացվել Ենգիջայի /Մասիսի բլուր/ նեոլիթյան բնակավայրում:
- Պեղումներ են կատարվել Երվանդաշատում:
- Պեղումներ են կատարվել Վայոց ձորի Արենի-1 քարայրում:
- Հետազոտություններ են կատարվել ուրարտական մետաղագործության վերաբերյալ:
- Պեղվել են Բջնիի միջնադարյան ամրոցի գաղտնուղու հատվածը և աշտարակը:
- Կատարվել են ուսումնասիրություններ Քաշաթաղի շրջանի Աղավնո 1-3 բնակավայրերում. Միջնավանում, Կերենի դամբարանադաշտում:
- Պեղումներ են կատարվել Կապանի Շահումյանի դամբանադաշտում:
- Ուսումնասիրություններ են կատարվել հնագույն քաղաքակրթություններում արտադրող տնտեսության առաջացման առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ:

## Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

***Թեմա 1.*** Հաշվետու տարում Հ. Ավետիսյանը ղեկավարել է Ինսբուրգի, Հալեի համալսարանների արշավախմբերի պեղումները Արամուսում և Օշականում: Կալիֆորնիայի համալսարանի հնագետների հետ պեղումներ է կատարել Մասիսի բլուր բնակավայրում: Բացվել են Արամուսի ֆորտիֆիկացիայի հետ կապված մի շարք շինություններ, տնտեսական կառույցներ: Գտնվել են բազմաթիվ աշխատանքային գործիքներ, զենք, սպառազինության տարրեր: Հայտնաբերված խեցեղենը թույլ տվեց ճշտելու համաժամանակյա մասսայական նյութի տիպաբանությունը: Հաշվետու տարվա ընթացքում Հ. Ավետիսյանը մասնակցել է Ենգիջայի նոր քարեդարյան բնակատեղիի պեղումներին: Հայտնաբերված նյութը լույս է սփռում երկրագործական մշակույթի վաղ փուլերի հետ կապված հարցերին:

***Թեմա 2.*** Ա. Բոբոխյանը պեղումներ է իրականացրել Մարգահովիտ և Սոտք բնակավայրերում: Կատարված աշխատանքները թույլ տվեցին ճշտելու Սոտքի շերտագրությունը, մասնավորապես բնակավայրի՝ ամրացված բնակավայր և ամրոց տրանսֆորմացիայի գործընթացը և ժամանակագրությունը: Ճշտվեցին պարսպի կառուցման ժամանակաշրջանը և ամրաշինական արվեստը: Միևնույն ժամանակ Նորաբակում պեղվել են երկաթեդարյան դամբարաններ, որոնց նյութերի հետազոտությունն ընդլայնեց մեր գիտելիքները նշված ժամանակաշրջանի թաղման ծեսի վերաբերյալ: 2012-2013թթ. Ա. Բոբոխյանը շարունակել է վիշապաքարերի հետազոտությունները՝ մասնավորապես ճշտելով վերջիններիս հնագիտական համատեքստը:

Ա. Բոբոխյանը հաշվետու տարում մասնակցել է արտասահմանում տեղի ունեցած մի շարք գիտաժողովների և կարդացել դասախոսություններ. 2012 թ-ին՝ «Անցյալի փորձից դեպի նոր մոտեցումներ և համագործակցություններ. հնագիտական ժառանգության կազմակերպման և պահպանման ապագան

տնտեսական ճգնաժամի պայմաններում», ԻԿՈՄՈՍ հելլենական և ԻԿԱՀՄ տարածաշրջանային կոնֆերանս, Աթենք, 2012 թ-ին՝ «Անատոլիայի-Հարավային Կովկասի մշակույթները», Միջազգային կոնֆերանս Էրզրումի համալսարանում, Էրզրում, 2013 թ-ին՝ «Առաջավորասիական հնագիտության հյուսիսային սահմանին. բրոնզեդարյան Կովկասի և Անատոլիայի վերաբերյալ վերջին հետազոտությունները», Հումբոլդտի հիմնադրամի միջազգային գիտաժողով, Վենետիկի Չա՛Ֆոսկարի համալսարան, 9-11 հունվար, Վենետիկ:

***Թեմա 3.*** Ա. Գնունին հետազոտություններ է կատարել ԼՂՀ Քաշաթաղի շրջանում «Պատմամշակութային ժառանգություն» ՀԿ-ի արշավախմբի կազմում: Շարունակվել են հետազոտություններն Արցախ-Սյունիք հնագույն ճանապարհին: Մասնավորապես հաստատագրված են դամբարանադաշտեր Միջնավան-Կովսական ճանապարհին: Պեղվել են դամբարաններ Կերեն գյուղում: 2012թ. պեղաշրջանի ընթացքում Կերենում ուսումնասիրվել է 4 դամբարան, որոնցից 2-ը թվագրվում են վաղ երկաթի դարաշրջանում, 2-ը՝ մ.թ.ա. VIII-VI դդ.: 2012թ. սեպտեմբեր-նոյեմբերին պեղումներ են կատարվել Կապանի Շահումյանի բազմաշերտ բնակավայրում և կից վաղ երկաթեդարյան դամբարանադաշտում: Պեղվել է 13 դամբարան: Ա. Գնունին մասնակցել է Բջնիի միջնադարյան ամրոցի պեղումներին: Կապանի և Բջնիի նյութերը պատրաստ են թանգարայնացման: Հետազոտվել են գետնուղին և աշտարակներից մեկը: Ա. Դավթյանը կատարել է Բջնիի, Արամուսի և Կապանի նյութերի գրչանկարումը:

***Թեմա 4.*** Ֆ. Տեր-Մարտիրոսովի կողմից շարունակվել են Երվանդաշատի պեղումները: Հետազոտությունները թույլ են տալիս ճշտելու ուսումնասիրվող տարածքի շերտագրությունը, վեր հանելու նյութական մշակույթի առանձնահատկությունները Երվանդյան և Արտաշիսյան ժամանակաշրջաններում:

***Թեմա 5.*** Բ. Գասպարյանը շարունակել է Արենիի քարայրի պեղումները՝ բացելով մի քանի պեղահրապարակ և ուսումնասիրություններ կատարելով քարայրին կից հատվածում: Հայտնաբերված նյութը բնորոշ է էնեոլիթի տարբեր փուլերին:

***Թեմա 6.*** Լ. Կիրակոսյանը և Տ. Վարթանեսովան մասնակցել են Արցախի Տիգրանակերտի պեղումներին: Պեղումներն իրականացվել են ինչպես միջնաբերդում, այնպես էլ կենտրոնական թաղամասում: Տ. Վարթանեսովան վերականգնել է պեղումներից հայտնաբերված նյութերը, ցուցակագրել դրանք և պատրաստել թանգարայնացման: Տ. Վարթանեսովան վերականգնել է նաև Բջնիի պեղումներից հայտնաբերված նյութերը: Լ. Կիրակոսյանն իրականացրել է հայտնաբերված հուշարձանների չափագրությունը: Տիգրանակերտի նյութերը ցուցադրվել են Էրեբունի թանգարանում և Ստեփանակերտում կազմակերպված ցուցահանդեսներում:

***Թեմա 7.*** Ն. Ավետիսյանը սիստեմավորել է և դասդասել Երևանի պատմության թանգարանում պահպանվող միջին և ուշ բրոնզեդարյան նյութերը:

***Թեմա 8.*** Լ. Աբաջյանը Հ. Ավետիսյանի հետ համատեղ ուսումնասիրում են արտադրող տնտեսության սկզբնավորումը Մերձավոր Արևելքում:

***Թեմա 9.*** Հ. Օհանյանն ուսումնասիրել և հրատարակության է պատրաստել Էջմիածնի պատմա-ազգագրական թանգարանում պահպանվող անտիկ նյութը՝ Թեղուտ, Գրամփա, Ոսկեհատ բնակավայրերից, ինչպես նաև Վաղարշապատի դամբարանադաշտից: Հ. Օհանյանն ուսումնասիրում է Կապանի բնակատեղիից հայտնաբերված անտիկ նյութը:

***Թեմա 10.*** Ռ. Մկրտչյանը 2012-2013 ուստարում կատարել է մեծ աշխատանք Հայաստանի հնամարդաբանության բնագավառում: Հետազոտվել, բնորոշվել, դասդասվել, փաթեթավորվել և նախապատրաստվել են թանգարայնացմանը ավելի քան 200 անհատի պատկանող կմախքներ Արագածի, Կապանի, Կերենի, Բջնիի, Քարաշամբի, Որոտանի, Նորաբակի, Սոնասարի դամբարանադաշտերից: Մշակվել է մարդաբանական նյութի փաթեթավորման, գույքագրման և թանգարայնացման սկզբունքորեն նոր մեթոդիկա:

### Հրատարակություններ

| Դասագիրք | Մենագրություն | Ուսումնական ձեռնարկ | Ուսումնամեթոդական ձեռնարկ | Հոդված | Զեկուցումների թեզիս |
|---|---|---|---|---|---|
| - | - | - | - | 21 | 3 |

### Գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

#### Հոդված


1. *Ավետիսյան Հ. Գ.,* Վանի թագավորության մշակույթի ուսումնասիրության հիմնախնդիրները, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք 1-ին, Վան, «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 101-108:
2. *Ավետիսյան Հ. Գ.,* Հնագետ Իգիթ Ղարիբյան, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 278-280:
3. *Ավետիսյան Հ. Գ.,* Ազգագրության նվիրյալը, Անուշավան Պետրոսյան, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես Ա, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 283-284:
4. *Տեր-Մարտիրոսով Ֆ. Ի.,* Աշխարհի կառուցվածքի գաղափարի արտացոլումը Աքեմենյան Իրանի քանդակներում, «Փարսիան», N 6, 2012, էջ 41-46:
5. Բոբոխյան *Ա. Ա., (Համահեղինակ՝ Ա. Գնորգյան),* Մարգահովիտ բնակավայրի պեղումները, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 118-120:
6. *Բոբոխյան Ա. Ա.,* Վասպուրականը Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան մշակութային զարգացումների համակարգում, Հայաստանի մայրաքաղաքները, գիրք I, Վան, Երևան, 2013, էջ 25-47:
7. *Կիրակոսյան Լ. Վ.,* Վանքասարի եկեղեցու ճարտարապետությունը և աղբբեջանական «վերականգնումը», ՊԲՀ, թիվ 1 (192), «Գիտություն» հրատ., Երևան, 2013, էջ 120-132:
8. *Կիրակոսյան Լ. Վ.,* Իգդիրի և Վանի շրջանի դամբարանների ճարտարապետությունը, «Հայագիտական հանդես», թիվ 3, Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, 2012, էջ 124-134:
9. *Тер-Мартиросов Ф. И.,* Царские династии Ервандидов в Армении, “Армянский гуманитарный вестник”, N 4, 2012, стр. 21-30.
10. *Avetisyan H. G.,* The fortress of Aramus in Achaemenid Times, Daroish Studies II: Persepolis and its Settlements: Territorial System and Ideology in the Achaemenid State, G.P. Basello, Rossi A. Series Minor LXXVIII, I, Napoli, 2012, pp. 403-424.
11. *Bobokhyan A. A.,* Vishapakars: Archaeological Investigation of Relief-Decorated Megaliths in Armenia, in: International Symposium on East Anatolia - South Caucasus Cultures, 10-13 October 2012, Erzurum University, Işıklı M., Can B. (ed.), Erzurum, 2012, p. 60.
12. *Bobokhyan A. A.*, Archaeological Investigations around Gold Mines of Sotk, Armenia, in: International Symposium on East Anatolia - South Caucasus Cultures, 10-13 October 2012, Erzurum University, Işıklı M., Can B. (ed.), Erzurum, 2012, p. 145.
13. *Bobokhyan A. A.*, Vom Kaukasus bis Dilmun und Magan: Zur Frage der Fernkontakte des sЂdkaukasischen Kulturgebiets an der Grenze vom 3. zum 2. Jt. v. Chr., in: Fragen der Geschichte und Archäologie Georgiens und Kaukasiens, Kiazo (Konstantin) Pitskhelauri Festschrift zum 80. Geburtstag, Kipiani G. (Hrsg.), Tbilisi, 2012, p. 89-115.
14. *Bobokhyan A. A.*, Archaeology of Armenia in Regional Context: Achievements and Perspectives, in: Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the

50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan, Avetisyan P., Bobokhyan A. (ed.), Yerevan, 2012, p. 7-20.

15. *Bobokhyan A. A.,* Trade Relations of Late Bronze Age Armenia, Studies in Caucasian Archaeology, I, Tbilisi, 2012, p. 164-208.
16. *Bobokhyan A. A.*, Investigation of Bronze Age in Armenia during the Post-Soviet Period, in: At the Northern Frontier of Near Eastern Archaeology: Recent Research on Caucasia and Anatolia in the Bronze Age, Humboldt Foundation International Conference, Ca' Foscari University, Venice, 9-11 January, 2013, Abstracts, Rova E., Tonussi M. (ed.), Venice, 2013, p. 2-3.
17. *Gasparyan B., Adler D. S., Yeritsyan B., Wilkinson K., Pinhasi R., Bar-Oz G., Nahapetyan S., Mallol C., Berna F., Bailey R., Schmidt B. A., Glauberman P., Wales N.,* The Hrazdan Gorge Palaeolithic project, 2008-2009 Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan, Edited by P. Avetisyan and A. Bobokhyan, "Gitutyn" Publishing house, Yerevan, 2012, pp. 21-37.
18. *Gasparyan B., Pinhasi R., Nahapetyan S., Bar-Oz G., Weissbrod L., Bruch A., Hovsepyan R., Wilkinson K.,* Middle Palaeolithic occupation at Hovk-1, Armenia Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan, Edited by P. Avetisyan and A. Bobokhyan, "Gitutyn" Publishing house, Yerevan, 2012. pp. 38-51.
19. *Gasparyan B., Chataigner C., Montoya C., Arimura M., Melikyan V., Liagre J., Petrosyan A., Ghukasyan R., Colonge D., Forlobey K., Arakelyan D., Astruc L., Nahapetyan S., Hovsepyan R., Balasescu A., Tome K., Radu V.,* From the Late Upper Palaeolithic to Neolithic in North-Western Armenia: Preliminary results Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan, Edited by P. Avetisyan and A. Bobokhyan, "Gitutyn" Publishing house, Yerevan, 2012, pp. 52-63.
20. *Gasparyan B., Arimura M., Chataigner C.,* Prehistoric sites in Northwest Armenia: Kmlo-2 and Tsaghkahovit, "Proceedings of the 7th International Congress of the Archaeology of the Ancient Near East, 12 April-16 April 2010, The British Museum and UCL, London, Volume 3: Fieldwork and Recent Research Posters", Edeted by Matthews R. and Curtis J. with the collaboration of Seymour M., Fletcher A., Gascoigne A., Glatz C., Simpson St. J., Taylor H., Tubb J. and Chapman R., Harrassowitz Verlag, Wiesbaden, 2012, pp. 135-139.
21. *Gasparyan B., Khechoyan A., Bar-Oz G., Malkinson D., Nachmias A., Nadel D.,* The northernmost kites in south-west Asia: the fingers of the Ararat Depression (Armenia) Project Antiquity, volume 087, issue 336, June 2013, http://antiquity.ac.uk/projgall/bar-oz336/.

### Զեկուցումների թեզիս

1. *Тер-Мартиросов Ф. И.,* Несколько наблюдений о декоре храма Св. Креста на острове Ахтамар, Միջազգային գիտաժողով՝ նվիրված ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ծննդյան 125-ամյակին, «Գիտություն» հրատ., Երևան, 2012, էջ 127-129:
2. *Ter-Martirosov F. I.,* Prospect research ceramic of Achamenid Empire in Iran, The International Armenaology and Iranology Conference, "Matenadaran", Yerevan, 2012, p. 27.
3. *Gasparyan B., Pertrosyan A.,* Rituali di sepoltura in alcune caverne dell' Armenia Preistoria e Protostoria in Etruria, Undicesimo Incontro Di Studi, Paessagi Cerimoniali Riserche e Scavi, Centro Studi di Preistoria e Archeologia, Valentano (VT), Pitigliano (GR), Milano, 14-16 Settembre 2012, pp. 23-24.